ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» ապրիլ 2025թ. N ՄՈ/483-Ա

ք. Արմավիր

« ՄԵԾԱՄՈՐԻ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի ապրիլի 14-ի N ՄՈ/466-Ա որոշումը, « Մեծամորի N 1 հիմնական դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա.Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Մեծամորի N 1 հիմնական դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Շաքե Հարությունյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ա.Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝(Ա.Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը (Ն.Մարտիրոսյան)՝ աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-04-23 14:35:09
Հավաստագրված է eID-ով

eID

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզպետի

2025 թվականի մարտի 23-ի

N ՄՈ/483-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Անդամներ՝

Ս.Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Լ.Ղազարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Հանձնող՝

Ս. Բարսեղյան

«Մեծամորի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

Ընդունող՝

Հ.Մնացյան

« Մեծամորի N 1 հիմնական դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

23.04.2025

X

VERIFIED OCSP 23.04.2025 14:32:56 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023